

34) Gustav Hirschfeld „Ausdem Orient“ 388 s. Գուստավ Հիրշֆելդ „Արևելքից“ 388 էրես:

Այս գրքի հեղինակը *) գերմանական գրականութեան մէջ յայտնի է իբրև պատմական աշխարհագրութեան ականաւոր ներկայացուցիչներից մէկը: Նա այս կամ այն երկրի ներկայ դիրքի ու վիճակի մասին խօսելիս մեծ նշանակութիւն է տալիս և անցեալում տեղի ունեցած փոփոխութիւններին ու պատմական փաստներին:

Այդ միեւնոյն ուղղութիւնը նկատուում է և յիշեալ աշխատութեան մէջ: Այստեղ հեղինակը խօսում է Արևելքի կամ ասիայի ճիշտն ասած ֆոքր-Ասիայի մասին և իր ճանապարհորդական տպաւորութիւնները համեմուծ է մի շարք պատմական տեղեկութիւններով: Խօսելով ֆոքր-Ասիայում ապրող ազգերի մասին, նա յայտնում է այն կարծիքը, որ «երբէք չի կարելի ասել թէ այս ազգն անպայման լաւ ու արդար է, իսկ միւսը—անպայման վատ ու անարդար և սկզբից մինչև վերջը հետևում է այդ սկզբունքին, այդ միջին ճանապարհին»:

Սակայն նոյն իսկ նրա հաղորդած հատ ու կտոր տեղեկութիւններից երևում է, որ Թիւրքիայում հայերը ենթակայ են հալածանքների, թէև իրանց ընդունակութեամբ ու կուլտուրայով աւելի բարձր են հարևաններից...

Համեմատութեամբ հետաքրքիր են գրքի այն տեղերը, որտեղ պատկերացրած են հեղինակի յարաբերութիւններն ու խօսակցութիւնները թիւրք պաշտօնեաների հետ, բայց այստեղ էլ ասելով որ մանրամասնութիւնն է այդ առաւելութիւնը փչացնում:

Ընդհանուր առմամբ գիրքը իր մէջ ոչ մի նորութիւն չի պարունակում և ձանձրալի է իր երկար աւելորդութիւններով:

Ե. Թ.

35) Советъ Сѣзда нефтепромышленниковъ. Обзоръ Бакинскон нефтяной промышленности за 1900 годъ. Очеркъ нефтяной промышленности С. Америки и статистическія свѣдѣнія о нефтяной промышленности въ Грозномъ. Съ приложеніемъ 13-ти диаграммъ и 2-хъ картъ. Баку, 1901 г. Цѣна 5 р.

Այս վիճակագրական տեղեկութիւններով հարուստ հաս-

*) Նա այժմ մեռած է: Այս աշխատութիւնը լոյս է տեսել նրա մահից յետոյ, Հրատարակիչն է „Allgemeine Verein für Deutsche Literatur“ ընկերութիւնը:

տափօր հրատարակութիւնը այնքան առատ նիւթեր է պարու-
նակում մեր երկրի ամենախոշոր արդիւնաբերութեան մասին,
որ արժէ նրան նուիրել մեր ամսագրում մի առանձին տե-
սութիւն: Մի արդիւնագործութիւն, որով զբաղուած են 36
հազարից աւելի ծառայողներ ու բանուորներ, որի մէջ զբա-
ծ են միլիոններ, որ իր գոյութեամբ ահագին փոփոխութիւններ
է մտցնում մեր ամբողջ երկրի ոչ միայն զուտ անտեսական,
այլ և հասարակական ու բարոյական յարաբերութիւնների մէջ—
անշուշտ պահանջում է առանձին ուշադրութիւն դէպի ինքը:

Բացի ընդհանուր նշանակութիւնից այդ արդիւնաբերու-
թիւնը ունի մի առանձին հետաքրքրութիւն մեզ, հայերիս, հա-
մար, որովհետեւ այդ միակ ճիւղն է, ուր հայերի կապիտալը,
ինտելիգենտ և բանուոր ոյժերը խոշոր գործունէութիւն են
ցոյց տալիս: Ընդհանուր ծառայողների և բանուորների թուի
մէջ հայերի թիւը համեմատ է 8,586 հոգու:

Այդ ահագին հատորի նիւթը բաժանուած է երեք մասի.
1) Նաւթահորերի, գործարանների, նաւթային առևտրի և ար-
տահանութեան դրութիւնը 1900 թուին: 2) Մ.-Նահանգների
նաւթագործութեան դրութիւնը և Գրօզնայի նաւթագործու-
թեան մասին վիճակագրական տեղեկութիւններ: 3) Աղիւսակ-
ներ մանրամասն տեղեկութիւններով Բագուի նաւթագործական
ֆիրմաների և նաւթի արտահանութեան մասին:

Առաջաբանից երևում է, որ վիճակագրական նիւթի մշա-
կումը կատարել են գլխաւորապէս պ.պ. Կօկաեվը, Բայըլը
և Առաքելեանը, Մ.-Նահանգների նաւթագործութեան տեսու-
թիւնը կատարել է պ. Բօղէնֆէլդը, իսկ Գրօզնի նաւթային ար-
դիւնաբերութեան մասին վիճակագրական տեղեկութիւններ
կազմել է լեռնային ինժեներ Իւշկինը: Տեղեկագրի ընդհանուր
խմբագրութիւնը պատկանում է Ստատիստիկական բիւրօյի կա-
ռավարիչ պ. Վ. Իստօմլինին:

Լ. Ս.

36) Armenia. Travels and studies. By H. F. B. Lynch.
Հրատարակութիւն Longman, Green et Co, London: Գինն է 42 շ. (21 ա.)
2 հատոր, 945 էրես, 197 լուսանկար և փորանկար պատկերներով. բազ-
մաթիւ լատակագծեր և քարտէզներ. մեծ քարտէզ՝ Հայաստանի և սահ-
մանակից երկրների:

Շատերն են ճանապարհորդել Հայաստանում, բայց
քչերն են նուիրել նրան այնքան մանրամասն և բարեխիղճ ու-
շադրութիւն—ինչպէս պ. Լինչը: Պ. Լինչը նրանցից է, որոնք